ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Փգիշտիի 1

№ 1777-Ա « 12 » մայիսի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 596-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

1.Երևանի քաղաքապետի 2025 թվականի փետրվարի 26-ի «Երևանի քաղաքապետի որոշման նախագծի օրինակելի ձևը հաստատելու մասին» N 596-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Որոշման վերնագրում «ՆԱԽԱԳԾԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ» բառերը փոխարինել «ՆԱԽԱԳԾԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐԸ» բառերով.

2) Որոշման նախաբանում «N 249-Ն որոշումը,» բառերից հետո լրացնել «Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի N 718-Ն որոշումը,» բառերը.

3) Որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ •

«1. Հաստատել՝

1) «Երևան քաղաքի վարչական տարածքում շենքերից և շինություններից դուրս ավտոմատ ինքնասպասարկող սարքի տեղադրման թույլտվություն տրամադրելու մասին» Երևանի քաղաքապետի որոշման նախագծի օրինակելի ձևը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) «Երևան քաղաքի վարչական տարածքում հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվություն տրամադրելու մասին» Երևանի քաղաքապետի որոշման նախագծի օրինակելի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:».

4) Որոշման 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ •

«2. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի, ծառայությունների և գովազդի վարչության պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված թույլտվությունները տրամադրելու մասին Երևանի քաղաքապետի որոշման նախագծերը Երևանի քաղաքապետի հաստատմանը ներկայացնել սույն որոշմամբ սահմանված օրինակելի ձևերին համապատասխան՝ պահպանելով Երևանի քաղաքապետի 2023 թվականի դեկտեմբերի 8-ի N 4072-Լ որոշման հավելվածով սահմանված Երևանի քաղաքապետի որոշումների նախագծերի մշակմանը, ընդունմանը և կատարմանը ներկայացվող պահանջները:».

5) Որոշման հավելվածում՝ «Հավելված» բառը փոխարինել «Հավելված N1» բառերով.

6) Որոշումը լրացնել նոր N 2 հավելվածով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առևտրի, ծառայությունների և գովազդի վարչության պետի վրա:

3.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
12.05. 2025թ.
հ. 1777 -Ա որոշման

«Հավելված N 2
Երևանի քաղաքապետի
26.02.2025թ.
հ. 596-Ա որոշման

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№_____ « » 202 թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով _____
(նշվում է անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի անունը (անվանումը), լիազորված անձի դեպքում՝ նաև լիազորված անձի տվյալները)

դիմումը, ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի N 718-Ն որոշմամբ՝

1. «_____»
(նշվում է անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի անունը (անվանումը)

_____ թվականի _____ սեզոնի համար տրամադրել Երևան քաղաքի
(նշվում է տարին) (նշվում է սեզոնը)

_____ հասցեին հարակից
(նշվում է հանրային սննդի ծառայության մատուցման վայրի հասցեն)

_____քմ մակերեսով ընդհանուր
(նշվում է քննարկվող ընդհանուր օգտագործման տարածքի մակերեսի չափը)

օգտագործման տարածքում հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվություն:

2. Ընդունել ի գիտություն, որ հանրային սննդի ծառայության կազմակերպման _____ թվականի _____ սեզոնի թույլտվության համար սահմանված
(նշվում է տարին) (նշվում է սեզոնը)
տեղական տուրքը վճարված է:

3. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի, ծառայությունների և գովազդի, ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունների պետերին ու _____ վարչական շրջանի ղեկավարին՝ իրականացնել
(նշվում է Երևանի համապատասխան վարչական շրջանի անվանումը)
հսկողություն սույն որոշման 1-ին կետում նշված տարածքում _____ կողմից Երևան
(նշվում է անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի անունը (անվանումը)
քաղաքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի N 718-Ն որոշման պահանջների կատարման նկատմամբ:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի, ծառայությունների և գովազդի վարչության պետի վրա:

5. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետի համապատասխան ոլորտը համակարգող տեղակալը:

6. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում: »:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ